

ԱՐԺՈՒՅԹ ԵՎ ՎԵՐԱՔԵՐՄՈՒՆՔ

Յ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Արժույթի և արժութաբանության թեմաները թերևս ամենից ավելի տարրուացված և զաղափարախոսական աղճատումների ենթարկվածներից են «դիմապատի և պատմատի» փիլիսոփայության մեջ:

Հարկ է նշել, որ դիալեկտիկամատերիալիստական փիլիսոփայության մեջ, որոշակի պատմական և մշակութային-իմացական հանգամանքների բերումով, ձևավորվել է դետերմինիստական-արտացոլիչ հարացույցը որպես գերակայող, հետևաբար և ամեն մի թեմայի հայտնությունը անխուսափելիորեն անցնում է այդ հարացույցի «գործունեությամբ»: Ինքնին վերցրած, այդ մտային գործառնությունը, որոշակի սահմաններում և որոշակի խորությամբ իրագործված, միանգամայն բնականոն է տեսական գործունեության ցանկացած բնագավառի համար: Կարևորը, սակայն, ոչ միայն այդ «որոշակի սահմանների և որոշակի խստության» խախտման, այլև այն հանգամանքի անտեսման մեջ է, որ փիլիսոփայությունը չի կարող իր ինտելեկտուալ լիբերալությամբ նույնացվել գիտական գործունեության այս կամ այն ճյուղին: Ըստ իս, առաջադիմական աշխարհայեցողության հավակնություն ունեցող փիլիսոփայությունն իր աշխարհըմբռնման և աշխարհմեկնաբանման ինտելեկտուալ կառույցների առումով պետք է ունենա՝ առավել ազատամտություն և բազմակարծություն, քան ինտելեկտուալ գործունեության ամեն տեսակի այլ ձևերը:

Արժույթի հասկացության և արժութաբանության՝ որպես փիլիսոփայության մասնահատուկ բաժնի, զաղափարական-տիեսական ակունքները Ի. Կանտի փիլիսոփայական ուսմունքն է, մարդկային բանականության նրա հայտնի տարաբաժանումը տեսական և պրակտիկ տարատեսակների: Ընդամին, Կանտի մեթոդաբանությունը հիմնվել է դուալիստական է, ի տարբերություն նրա փիլիսոփայական ճամփագրի դուալիստական լինելու մասին մեզանում լայնորեն տարածված և ակնհայտ համարվող հայացքների: Եվ եթե, իսկապես, «ինքնին իրի» մասին կանտյան կոնցեպցիան հազիվ թե հավաստի կլիներ գնահատել որպես մատերիալիստական, ապա այն ստուգորեն կառուցված է դետերմինիստական-արտացոլիչ սկզբունքների վրա, որքանով որ ելնում է ինքնին իրի՝ սուբյեկտից դուրս և անկախ գոյի, և (որ հատկապես կարևոր է տվյալ պարագայում)՝ նրա՝ ֆենոմենների տեսքով մարդու զգայական իմացական ձևերում առավածության կանխադրույթներից: Եյուս կողմից, կասկած չի կարող հարուցել Կանտի ուսմունքում գերիշխող քննադատական-ապրիորիստական տրանսցենդենտալիստական մեթոդաբանության առկայությունը, որը մեր տերմինաբանությամբ ոչ այլ ինչ է, քան փիլիսոփայական բոլոր տիրույթների նկատմամբ կիրառած վերաբերմունքային մոտեցում: Դետերմինիստական (արտացոլման) և վերաբերմունքային մոտեցումների կանտյան դուալիզմը, սակայն, հավասարազոր չէ հետկանտյան փիլիսոփայության իմացականի և արժույթայինի երկփեղկմանն ու հակադրմանը: Հայտնի է, որ առաջին հերթին իմացության ասպարեզում է Կանտը բանեցրել տրանսցենդենտալիստական-վերաբերմունքային իր մեթոդաբանությունը՝ կարծես թե հրավիրելով իր հետևորդներին արժույթն ու արժույթայինը փնտրել ոչ թե արտաիմացական ոլորտներում, այլ բուն իմացական գործունեության հյուսվածքում:

Այնուհանդերձ, Կանտի փիլիսոփայության պատմական ժաղալումների մեջ, հատկապես XIX դ. վերջին և XX դ. սկզբին լայն թափ առած նեոկանտականության ուսմունքներում, առաջնությունը տրվեց մոնիստական մեթոդաբանությանը՝ գերմանական դասական փիլիսոփայության հիմնադրի աշխարհայեցողության հիմնական արատը նկատելով ինքնին իրի թողություն հետ կապված անհետևողականությունը։ Միաժամանակ նեոկանտականությունը կատարում է նաև երկրորդ վերանայումը Կանտի ուսմունքում. մարքուդյան և բադենյան դպրոցները ոչ միայն տարամիտում են կանտյան մաքուր և գործնական բանականության ձևերը իրենց զուտ վերացությունների և անջրպետվածության հարցում, այլև, հանձին Գ. Ռիկկերտի և Վ. Վինդելբանդի, սկիզբ է գրվում մի ինտելեկտուալ ավանդույթի, որի համաձայն արժույթը և արժույթայինը պատկանում են միայն գործնական բանականության ոլորտին։

Մեթոդաբանական մոնիզմը նեոկանտականության բադենյան ճյուղում «խաղի իր կանոններն» է առաջադրում։ «Հարթած սպեկուլյացիան», ձերբազատվելով ինքնիշխան իրի կապանքներից, իր ինքնաբավության մեջ ոչ միայն ավարտուն և հետևողական իդեալիստական համակարգ է ստեղծում, այլև յուրահատուկ ձևով վերարտադրում է իր իսկ մեթոծ գեոմետրիկապատկան-արտացոլիչ մեթոդաբանությունը, «շուռ տված»՝ իդեալիստական էսսենցիալիզմի և սուբստանցիալիզմի տեսքով։ Նկատի ունենք տրանսցենդենտալ և էմպիրիկ սուբյեկտների և դրանց համապատասխանող գոյերի մասին¹։ Ռիկկերտի հայեցակարգը², որի համատեքստում արժույթներին վերագրվում է տրանսցենդենտալ սուբստանցիոնալ գոյավիճակ, որոնցից սերում սահմանվում են էմպիրիկ սուբյեկտները արժույթային կողմնորոշումները։

Արժույթաբանության փիլիսոփայական հետազոտությունները թերևս ընթանում են աշխարհայացքային հավերժական երկփեղկման՝ մատերիալիզմի և իդեալիզմի դիրքերից իրագործվող սուբստանցիալիստական մեթոդաբանության հունով։ Մատերիալիստական սուբստանցիալիզմը, ի հակադրություն իդեալիստականի, արժույթայինը հիմնավորում է մատերիալիստորեն մեկնաբանված գեոմետրիկիզմի և արտացոլման սկզբունքներով, համառ հետևողականությամբ փորձելով օբյեկտիվ նշանակիրներ փնտրել արժույթային հասկացությունների, դատողությունների և ապրումների համար։ Վերջինիս ամենատիպական արտահայտությունն էլ արժույթայինի այն կանոնակարգված, գերակայող հարացույցի կարգավիճակ ստացած մեկնաբանությունն է դիալեկտիկամատերիալիստական փիլիսոփայության մեջ, որի մասին նշեցինք վերևում։ Մասնավորապես խոսքը հետևյալի մասին է։ Հայրենական փիլիսոփայական հետազոտություններում արժույթաբանական կոնցեպցիաները կարելի է տարաբաշխել «գոյաբանականների» և «նշանակալիության» կողմնակիցների։ Առաջինները, հետևելով մատերիալիստական դիալեկտիկայի գոյաբանական մեկնաբանությանը, արժույթը դիտարկում են իր-հատկություն-հարաբերություն կատեգորիայի հիմնականույցի վրա³։ Երկրորդները, որոնք ակնհայտորեն գերակշռում են գիտական բանավեճում, արժույթը դիտարկում են որպես մարդու և բնական-հասարակական իրականության փոխհարաբերության արդյունք, որպես մարդու համար վերջիններիս նշանակալիության ֆունկցիա⁴։ Երկու կոնցեպցիաների համար ընդհանրական կարող է լինել այն, որ արժույթային երևույթները երկփեղկված են երկու բևեռների՝ այսպես կոչված առարկայական արժույթների և սուբյեկտային արժույթների՝ որպես առաջինների գնահատման չափանիշների և

¹ Г. О. Риккерт, О понятии философии, кн. I, М., 1910 с. 33.

² См.: В. П. Тугаринов, Теория ценности в марксизме, Л., 1968, с. 11.

³ См.: М. С. Каган, Лекции по марксистско-ленинской эстетике, Л., 1971, с. 88—89; А. М. Коршунов, Отражение. Деятельность. Познание, М., 1979, с. 148—159.

եղանակները կրողներին⁴։ Ընդամենն, արժույթաբանական հետազոտությունների բուն կոնցեպտուալ միջուկը, մեթոդաբանական բնույթը կարելի է որոշել ինչպես այն բանից, թե ինչպիսի տրամաբանական միջոցներով է առաջարկվում իրագործել այդ երկփեշկված արժույթային ոլորտների միավորումը։ Վերլուծությունից պարզվում է, որ որպես այդպիսի կոնցեպտուալ միավորման հիմք է ծառայում մատերիալիստական դեռերմինիզմի և արտացոլման կատեգորիական ապարատը։ Հատուկ շեշտը դրվում է մանրամասնելով այդ պնդումը, կանգ առնենք արժույթային մասին Հ. Շաքարյանի կոնցեպցիայի՝ որպես արժույթաբանության մեջ նշված մեթոդաբանական միտումի հետևողական և բացահայտ դրսևորման վրա։

Իր ըմբռնումը նա անվանում է արժույթային կրկնակի արտացոլման կոնցեպցիա⁵։ Ըստ Հ. Շաքարյանի, արժույթայինում (հասկացության, դատողության մեջ) «արտացոլումը երկակի բնույթ է ձեռք բերում՝ որպես որոշակի առարկայական իրականության արտացոլում և որպես վերջինիս հարող որոշակի սոցիալական խմբերի շահերի, ցանկությունների, իդեալների և նպատակների արտացոլում»⁶։ Այս սկզբունքային մոտեցումը հիմնավորելու համար նա ապավինում է այն դրույթին, որ «Ամեն մի արտացոլում, առավել ևս սուբյեկտի շրջանակներում, միաժամանակ և ինքնարտացոլում է, ինչպես յուրաքանչյուր գնահատում նաև ինքնագնահատում է»⁷։ Փաստական և արժույթային դատողությունների տարբերությունը, ըստ կոնցեպցիայի հեղինակի, այն է, թե նրանում այդ հակադրամիասնության ո՞ր կողմն է գերակշռում՝ օբյեկտիվ ռեալության, թե՞ սուբյեկտիվ ռեալության արտացոլումը⁸։ Քննարկման մեր դիտարկման համար կարևոր է նաև այն, որ Հ. Շաքարյանը որպես արժույթային առավելություն իմացականի նկատմամբ առանձնացնում է նաև արժույթայինում պրակտիկ բաղադրիչի առկայությունը⁹։

Ամենից առաջ հարց է առաջանում. ինչո՞ւ արժույթները չդիտել որպես եռակի արտացոլման արտահայտություն, որքանով որ դրանց մի տարատեսակը (իդեալները, ցանկությունները, շահերը, նպատակները) իրենք իսկ հիմնավորապես կարող են մեկնաբանվել որպես արտացոլման ձևեր՝ ինչպես թեկուզև այն սիլլոգիզմից, որի կանխադրույթները, իդեալները, նպատակները գիտակցության տարրերն են և գիտակցությունն օբյեկտիվ իրականության արտացոլումն է։

Երկրորդ. արտացոլման տեսության ելակետային իդեալականացումներում սկզբունքորեն անթույլատրելի պետք է դիտվի «ինքնարտացոլում» վերացարկումը, որը հակասում է արտացոլման սահմանմանը՝ որպես արտաքին (ուրիշ) ազդեցությունների ստուգատեսային փոխանցման պրոցես։ Ինքնազդեցությունը այդ իմաստով հավասարազոր չէ ինքնարտացոլմանը և ինքնիմացությանը, այլ աշխարհի ու ինքն իր նկատմամբ մարդու վերաբերմունքի բաղադրիչ է և արտահայտություն։

Երրորդ. հիմնավորված չէ նաև դործնական բաղադրիչ ներառումը արժույթային մեջ, եթե այն մեկնաբանվում է արտացոլման տեսության մեկնակետով։ Բանն այն է, որ ինչպես և իմացականի արտացոլիչ հիմնավորման պարագայում, մեկնաբանության իրավազորությունն ավարտվում է հոգեկանի ոլորտով (պրակտիկան այդ իմաստով սխալ է դիտել որպես իմացության առանձին աստիճան կամ ձև)։

Ավարտելով Հ. Շաքարյանի կոնցեպցիայի քննությունը, հարկ է արձա-

⁴ Философская энциклопедия, т. 5, М., 1970, с. 462.

⁵ См. Г. Г. Шакарян, О гносеологической значимости ценностного (Բանբեր Ծրեանի համալսարանի, 1988, № 1, էջ 22—33)։

⁶ Նույն տեղում, էջ 26։

⁷ Նույն տեղում, էջ 27։

⁸ Նույն տեղում։

⁹ Նույն տեղում, էջ 30։

նադրել, որ այդ ըմբռնման անշարժութային արտացոլիչ հիմնավորումը ազնիվ հետևողականությամբ հասնում է իր սահմաններին և... սահմանազանց է լինում՝ գործառնելով այնպիսի մտադրություններով, որոնք այլ մոտենյունների և իդեալականացումների աշդույնք են: Հիրավի, հեղինակի մտադրությունը արժութայինի իմաստավորման համար հետևողականորեն օգտագործվում են վերաբերմունքի կառուցվածքի հիմնատարները՝ աշխարհի պատկերը, ինքնադիտակցումը, զգայական-առարկայական գործունեությունը: Մա տիպական մեթոդաբանական «գեիացիա» է, երբ երևույթի բնույթով պարտադրված մտադրությունը շարունակում է հանդես գալ բնական-կանոնակարգված-սրբագործված մեթոդաբանական հանգրվան: Այլ կերպ ասած, Շաքարյանի մտադրությամբ հարկ է գնահատել որպես արժութայինի «ամոթխած», «գաղտնի» վերաբերմունքային մեկնաբանություն, որը, սակայն, մեծ ինտենսիվությամբ գործառնում է արտացոլման հետևանքային բառամթերքով: Այնուհանդերձ, այդ մտադրությունը պահպանվում են արտացոլման մեթոդաբանությամբ պահանջարկով՝ արժութայինի մեկնասացումը իմացականից և դրանց միայն արտաբերությանն են հաստատում: արժութայինի իմացաբանական նշանակության հարցադրմամբ կամ աշխարհի հոգևոր պատկերի մտադրությամբ, որտեղ արժութայինն ու իմացականն ինքնուրույն բաղադրիչներ են կաղնում¹⁰: Հարկ է նշել, որ արժութայինի արտացոլիչ մեկնաբանության հարացույցն այնպես «ամուր է ստանձ» արժութաբանության խորհրդային երևելի հետազոտողների աշխատություններում, որ նույնիսկ Օ. Դրոբնիցկին, նախապես լայնախոհորեն թույլատրելի համարելով արժույթի դիտարկումը որպես՝ ա) առարկայի հատկություն, բ) մարդու համար այդ առարկայի նշանակություն, գ) վերաբերմունք այդ առարկայի հանդեպ, այդուհանդերձ, եզրահանգում է, որ արժութայինը հարկ է բնութագրել ռոպես սոցիալական հարաբերության ազդեցությամբ ձև, որում վերջիններս հանդես են գալիս որպես մարդու վերաբերմունք առարկայի նկատմամբ կամ առարկայի վերաբերմունքը մարդու հանդեպ, այնուհետև նաև որպես առարկայի հատկություն, արտաքին՝ մարդու համար (ընդգծումը մերն է—Ֆ. Կ.)¹¹: Հետագայում նա հետևողականորեն զարգացնում է այդ գրույթը՝ արժութայինը լավագույն դեպքում դիտելով որպես աշխարհի իմացական արտացոլման ընդհանրացման նախնական ձև, որն իմացության խորացմանը զուգընթաց ինվոլյուցիայի է՝ ենթարկվում իր տեղը զիջելով տրամաբանական ռացիոնալության ձևերին: Հեղինակից ժառանգված այս արժութաբանական սկզբունքի մասին ինչից զուտ նաև արդյունք է սխալ ըմբռնված մեթոդաբանական մոնիզմի:

2. Շաքարյանը, սակայն, միայնակ չէ արժութայինի՝ արտացոլման տեսության (ըստ էության՝ դետերմինիստական սուբստանցիալիզմի) դիրքերից տրվող հիմնավորման մենատիրությունը ակամա խախտելու մեջ: Նույնիսկ հայտնի «օնթոլոգիստները» թույլ են տալիս նման ոչ ուղղադական շեղումներ: «Արժութի պրոբլեմը՝ առավելապես մարդկային աշխատանքի նյութական և հոգևոր արդյունքների նկատմամբ սուբյեկտի վերաբերմունքի պրոբլեմ է» (ընդգծումը մերն է—Ֆ. Կ.)¹²:

Ընդունված հարացույցից առավել կայուն հետևողականությամբ շեղվում է Ի. Նարեկին, որի համաձայն արժութը ժմի կառուցողիկ է, որը բնութագրում է առաջադրված նպատակների ու նպատակների և միջոցների

¹⁰ Նույն տեղում, էջ 29:

¹¹ Օ. Գ. Դրոբնիցկի, Некоторые аспекты проблемы ценности (Проблема ценности в философии, М., 1966, с. 56).

¹² Б. А. Чагин, Проблема ценности и оценки в свете трудов К. Маркса, Ф. Энгельса, В. Ленина, М., 1976, с. 7.

Արժույթի վերաբերմունքային մեկնաբանության ոչ սուբյեկտիվացմանը ցույց տանք նրանով, որ արժույթի, որպես որևէ երևույթի մարդկային նշանակալիության և նրա մարդկային գործունեության կարգավորիչ լինելու հանրահայտ բնորոշումները ընդունելով հանդերձ, մեր մոտեցման դիտանկյունից դրանք սկզբունքորեն անբավարար են, եթե չեն միջնորդավորված մարդու ինքնադիտակից, ազատ-կամային ընտրությամբ: Այլապես հարկ կլիներ արժույթի գոյությունը արձանագրված համարել նաև բարձրակարգ կենդանիների մեջ, որքանով որ թե՛ գրգռիչի նշանակալիությունը, և թե՛ վերջինիս էական կարգավորիչ գործառույթները առկա են նրանց կենսագործունեության մեջ: Այս առումով արժույթը կարելի է սահմանել այսպես. աշխարհի ու ինքն իր նկատմամբ մարդու՝ տեսական և հոգևոր-գործնական վերաբերմունքի համեմատաբար կայուն, ավարտված ձևագոյացություն, իբրև որևէից երևույթի մարդկային նշանակալիության ազատ-կամային հաստատմամբ այն վեր է ածվում մարդկային գործունեության կարգավորիչ: Արժույթայինը, հետևաբար, օրգանապես ներհնաված է մարդու տեսական և հոգևոր-գործնական գործունեությանը և ոչ թե գոյություն ունի որպես իմացությունից դուրս և անկախ ոլորտ, որը կարող է փոխադրել իմացականի հետ, վերջինով հիմնավորվել և այլն, որն այնքան տարածված է սցիենտիստական գաղափարի մոտակառույցներում: Արժույթը առարկայի, հրեույթի, մարդու հոգեֆիզիկական բնութագրերի՝ հասարակական գոյով պայմանավորված գործառական հատկանիշն է: Հետևաբար, մարդու վերաբերմունքն է այն ստեղծագործական հիմքը, որի ընդերքում առաջանում, ձևավորվում և լինելություն են ապրում արժույթները:

Արժույթի համար որոշիչ ոչ թե մատերիական պրակտիկայի մակարդակն է¹⁸, այլ հենց վերաբերմունքի բնույթը և «մակարդակը», իսկ պրակտիկական այդ վերաբերմունքի մի գրվածքն է միայն, նրա օբյեկտիվացման առարկայացման եղանակը: Վերաբերմունքի կառուցում հենց ռեֆլեքսիվ բաղադրիչն է մարդու հոգեկանում տրված օբյեկտիվությանը (և իր իսկ հոգեկանի ամեն մի բաղադրիչին)՝ արժույթային որակ հաշտություն, քանի որ ռեֆլեքսիայի ոլորտում ամեն մի երևույթ վեր է ածվում միջոցի՝ մարդկային ես-ի ինքնադիտարկման համար: Ասել է թե՛ արժույթը մակարդակավորվում է մարդկային ես-ի համընդհանուր միջնորդավորող և միջոցավորող գործունեությունից:

Այլ կերպ ասած, մենք այն տեսակետն ենք պաշտպանում, որ արժույթը ինքնաբերական բնույթ ունի և ներկայացնում է վերաբերմունքի տիպերի յուրահատուկ զանազանակերպը՝ որպես ինտեգրացիայի և ինքնակազմակերպման կառուցվածքային ձև: Արժույթը, հետևաբար, ներհատուկ (իմանենա) է աշխարհի տեսական և հոգևոր-գործնական յուրացմանը կամ, որ նույնն է, աշխարհի յուրացման ամեն մի ձև ինքնարժեք է: Արժույթի գոյաբանական կարգավիճակը, հետևաբար, առաջարկվող վերաբերմունքային-ոչ սուբյեկտիվացիայի տեսական մեկնաբանության շրջանակներում կարող է բնորոշվել որպես այնպիսի միջոց ունեցող, այսինքն՝ ոչ թե որպես կեցության ձև (օբյեկտիվ կամ սուբյեկտիվ), այլ օբյեկտի՝ սուբյեկտը ներկայացնելու ձև, մարդու առարկայական-զգայական գործունեության սխեմա և կարգավորման ձև և, դրանով իսկ՝ մարդու ինքնագիտակցման ու ինքնաիրադրման եղանակ:

Աշխարհի նկատմամբ տեսական վերաբերմունքի, մասնավորապես գիտության, իբրև թե արժույթաբանական շեղումները վերացնելու համառ շատ հետազոտողներ առաջարկում են նրան դրսից պատվաստել ներարկել բարոյագեղագիտական կողմնորոշիչներ՝ այդ գործողությունը դիտելով որպես իմացական ոլորտի արժեքագրվածության փաստարկ: Այդպիսի ընդօրինակ-

¹⁸ См.: А. М. Коршунов, В. В. Мантатов, Диалектика социального познания, М., 1988, с. 198.

ման և փոխառման հնարավորությունը (ավելին՝ մեր օրերում դրա հրամայական անհրաժեշտությունը) փաստարկ է ոչ թե այն դրույթի օգտին, որ գիտությունն իր հյուսվածքներում արժույթներ չի պարունակում. այլ որ իր հզորությունը աննախագիտորեն մեծացրած տեսական գործունեությունը չի կարող այլևս բավարարվել զուտ իմացական (դրվագային, միակողմանի) արժույթներով և կարիք է զգում իր կարգավորիչների համակարգում ներառման, նաև հոգևոր-գործնական ոլորտի կարգավորիչներին: Այլ կերպ ասած, մեր ըմբռնման շրջանակներում իմաստավորված չէ իմացականի և առժուրբ արանականի գրեթե ակնհայտ դարձած որակական տարբերակումը: Ավելի ստույգ, մեր կարծիքով այդ «բինոմի» տակ որպես իրական մտահղույթ գործառնվում է տեսականի և հոգևոր-պրակտիկի, կամ առավել հիմնարար մոտեցմամբ՝ արտացոլման և վերաբերմունքի հակադրամիասնություններով: Հիրավի, եթե իմացական ոլորտը, ինչպես իրավացիորեն պնդում է Լ. Աբրահամյանը, ի դեմս էականության գնահատման ունի իր ներկա արժույթը, ապա ի՞նչ հիմունքներով է արժույթաբանականը մեկուսացվում և հակադրվում իմացականին¹⁹, իսկ այն դեպքերում, երբ, դիցուք, իմացության փոխադասության իմաստավորումներում դիֆերենցվում են նշանակություն-իմաստ, ճշմարտություն-ճշմարտացիություն, մոլորություն-սոստ երկանդամները, ապա մենք գործ ունենք ոչ թե իմացականի ոլորտը արժույթայինի «ներխուսման» հետ, այլ երկու հիմնարար տիպի արժույթների՝ տեսական և հոգևոր-պրակտիկ արժույթների համեմատման և հակադրման հետ:

Որոշակիորեն վերաիմաստավորվում է նաև լայնորեն տարածված «արժույթային վերաբերմունք» արտահայտությունը: Հիրավի, աշխարհի նկատմամբ յուրաքանչյուր վերաբերմունք իր մեջ արժույթային բաղադրիչ ունի, և արժույթային էպիտետը ավելորդ է դառնում (կարծես թե կարող է լինել նաև անարժույթային վերաբերմունք): Այնուհանդերձ, թե՛ առօրեական գիտակցության մեջ, և թե՛ գիտական-մասնագիտական գործառնություններում այդ արտահայտությունը կարող է իմաստը պահպանել միայն այն, ոչ այնքան ստույգ, բովանդակությամբ, երբ նկատի է առնվում մարդու տարասեռ վերաբերմունքների իրագործման մեջ արժույթային կողմերի գերակշռությունը:

Առաջադրվող տեսանկյունից որպես միակողմանի պետք է գնահատել նաև շարունակվող վեճերն այն մասին, թե արժույթը մարդկային գործունեության նախադրյալ պետք է դիտվի, թե արդյունք: Ինչպես վերևում ասվեց, արժույթը մարդու վերաբերմունքին ներհատուկ կառուցվածքագործառական օրենք է, վերաբերմունքի գոյաձևերից մեկը, և ամեն մի հարցադրում նրա մարդկային գործունեությանը նախորդելու կամ հաջորդելու մասին շինծու է ու կցկտուր. արժույթը և՛ նախորդում է, և՛ հաջորդում է, և՛ ամբողջ ընթացքում ուղեկցում է մարդկային գործունեությանը, իսկ վերջինս էլ ոչ այլ ինչ է, քան այն միակ ձևը, որով իրականանում է մարդու վերաբերմունքը աշխարհի, ինքն իր նկատմամբ:

Կարծում ենք նաև, որ արժույթի արտացոլիչ մեկնաբանության արտահայտություն է դրա հակադրումը կամքին և իմացական պրոցեսներին²⁰: Օլնելով հոգեկանի եռանդամ կառուցվածքի մասին ավանդական ըմբռնումներից, պետք է եզրահանգել, որ այդպիսի մոտեցմամբ արժույթայինը նույնացվում է հուզականի հետ (ըստ հանրանշանակ և հանրամատչելի այն բնեմայի, որի համաձայն մարդը նախապես ճանաչում է աշխարհը, ապա գնահատում-արժեքավորում և հետո գործում): Մեր մեկնաբանությամբ, սակայն, արժույթը որպես վերաբերմունքի գոյաձև ինտեգրատիվ գոյացություն է, որում կարող են առկա լինել հոգեկանի բոլոր բաղադրիչները (իմացական ձևերը, հույզերը, կամքը): Ավելին, ինչպես արդեն քանիցս բնագործվեց, այդ մեկնաբանությամբ արժույթը առավել ամբողջականությամբ է

¹⁹ Л. А. Абрамян, О реальности идеального, Ереван, 1989, с. 23.

²⁰ Слов Философский энциклопедический словарь, М., 1983, с. 765.

ընդունվում, քանզի նրա ձևագոյացման շեղ վճռական դեր է խաղում ինքնագիտակցությունը: Ուրեմն, ըստ մեր մեկնաբանության, մարդու հույզերը՝ ինքնին, մեկուսի վերցրած, չեն կարող որպես աշխարհի նկատմամբ վերաբերմունքի (հետևաբար ե՛ւ արժույթի) ձև դիտվել, եթե չեն դիտարկվում: մարդու իմացական և կամային հոգեկան ակտիվությունների համատեքստում, նշանակում է՝ և իրենց ռեֆլեքսիվ-ռացիոնալացման «այլակեցության» մեջ: Երբ որոշ հոգեկան հիվանդությունների ժամանակ խախտվում են վերջին գործընթացները, ապա յանկացած ուժգնության աֆեկտների առկայությունը չի կարող վկայել հիվանդի՝ իրադրության (կամ իր իսկ) նկատմամբ մարդկային վերաբերմունքի, ուրեմն և արժույթային ապրումի, առկայության մասին: Ի վերջո, կարելի է պնդել, թե մեջ ըմբռնմամբ նույնացվում են այսպես կոչված արժույթաբանական և վերաբերմունքային մոտեցումները կամ, որ նույնն է, արժույթաբանության վերաբերմունքային հիմնավորումը արդյո՞ք լիովին բացառում է արժույթի մեկնաբանությունը արտացոլման տեսությամբ մեկնակետից:

Արժույթի գոյաբանական հիմքի, գործառնության էական ընդհանրումները բացահայտվում են միայն աշխարհի ու իր՝ մարդու, նկատմամբ վերաբերմունքի կատեգորիալ ձևով սահմանվող մեթոդաբանության հոունում: Իսկ արժույթի արտացոլիչ մեկնաբանությունը թեև չի կարող սկզբունքորեն մերժվել, այնուհանդերձ միայն օժանդակող, ոչ հիմնական բացատրական ֆունկցիաներ կարող է ստանձնել փիլիսոփայական արժույթաբանության մեջ:

ЦЕННОСТЬ И ОТНОШЕНИЕ

Ф. А. КАРАПЕТЯН

Резюме

Преобладающим в философских трактовках ценностного выступает методология теоретико-отражательного субстанциализма в ее материалистических и идеалистических разновидностях. Особо канонизировано и освящено применение такого подхода в философии «диамата и истмата», где иные, в частности, недетерминистические, истолкования ценностного приравниваются к иррационалистическим и индетерминистическим подходам.

Отношенческое истолкование ценности, если рассматривать его в широком методологическом аспекте, представляет собой некую разновидность структурно-функциональной методологии в области аксиологии, с рядом существенных оговорок. Кладя в основу понимания ценности отношение как базисной структуры человеческой субъективности, следует избежать эмпирического или трансцендентного субстанциализма. Теоретико-отражательная трактовка ценности при этом не отвергается, а как бы переносится на второй план.